

Y. Unwashed

No 7 gues by
unwashed

891.995

U-57

=441=

1.542-93 1-2

2011-05



ԱՆՐ ՀԱՆԴԵՐՈՒՄ

891.995

Ա-57

ՊԵՏՂԱՅ

ԱԱ

ՅԵՐԵՎԱՆ

„ՎՈՉ ՄԻ ԳԱՅԼ ՄԵՐ ՀԱՆԴԵՐՈՒՄ“

(Պատանի վոլոնտյորի հուշերից)



մեռ եր, խիստ ու դաժան ձմեռ:
Չորանի որը կտրի: ձմեռը
վոր կա, հենց չորանի կաշին քեր-
թելու համար ե ստեղծված: Են
ել ինչ չորան՝ 15-16 տարեկան,
կարկատած շալե շորերով ու մո-
թալ փափախներով տղերք եյինք:
Գոմահանդում վոլյոսար ու տավար
եյինք պահում: Ցերեկը տանում
եյինք՝ քամու սրբած տեղերը ա-
րածացնում, մենք ել մի բլրի վրա
մարմեյի(աթուրմա) եյինք խաղում,
վոր տաքանանք, կամ թե չե՝ մի

տեղ կրակ եյինք անում (փետը բոլ): չոր ճյուղերը ճարճատելով
կուլ եյին գնում թեժացող բոցին: կրակն իջնում եր թե չե, տուպ-
րակներեի կարտոֆիլը հանում եյինք ու լցնում շիկացած մոխրի
մեջ: Դե տղա յես՝ մոխրը սրբիր ու փուլ-փուլ կարտոֆիլը
կեր:

ԶԱՐԱՎԱՍՏԻԿ ԾԱՌԸ

Մի որ ել կրակ անելու հերթն իմն եր: Ածխակոթր տարա դրի
մի ահազին չորացած ծառի փչակում: Մի քանի բոցեյում բոցը
ճարճատելով բարձրացավ մինչև կատարն, ու ծառը սկսեց ալքվել
մի հսկայական մոմի պես:

Ել հվ տավարի մոտ կը կգնա: Վանանք, Գրիգորը, Հովսեփը,
Տիկոն մոտիկ բլրի լանջին տավար-վոլյոսար թողին ու հայ-հարայ
կանչելու: Թո՛ղ տեղով մոտս եկան:

Մի քանի րոպեից հետո մեր խումբը մտավ մեզ հետևող մեծ
պղնձե խմբի մեջ: Երբ խումբը մտավ մեզ հետևող մեծ



21005-59



Ա.Ա.

Աստու վոտները խանձեց հն. աստո՛ծ, դե հիմի փախի ու
խախի:

—Տո շնչ, աստո՛ծը նոր ա փախել, հանաքով նկատեց Գրիգորը,
լորը մի բիչ հասակով եր մեզնից և նոր եր մտել կոմսոմոլի մեջ,
ե՛ր գյուղում բլիջ կազմեցին թե չե մեր փայ աստո՛ծը թողեց ու
հղեց, ավելացրեց նա:

Որը մթնում եր, իսկ հրդեհված ծառը առկայծում եր, ճարճա տում, հսկայական կրակի լեզուներ յերկարում չորս կողմն ու Լու սավորում մթին ծմակները:

Իսկ մենք մոռացած ամեն բան «հո՛ւ» էյինք անում, թուշկո տում խարույկի շուրջը: Ճնազնդով խփում ծառին, վորից ծառը կայ ծերի խուրձեր եր արձակում ու ավելի բորբոքվում:

Մի գլխաշափ ձյան գնդակի մի ծայրում շիկացած քարեր էյ զրել և գլխիս քաշած՝ մյուս ծայրից հալվող ձյունի շուրն էյ ծծում (միշտ հանդում այդպես էյինք շուր ճարում, յերբ աղբյու րից հեռու էյինք լինում), մեկ էլ մի գոռոց լսեցի: Մեր ջեյրանի ձայնն եր: Գոռգոռոցը սաստկացավ ու գորդալով արձագանդեց մո տիկ ձորերում: Ուշքի յեկանք ու վազեցինք տավարի կողմը: Մե էլ տեսնենք՝ վոչխարի կեսը խրտնած, դեպի մեզ և վազում, իս տավարը, մանավանդ բուղաները, գոռգոռալով ձորն են թափվում:

Ալաշ հասի... Փալաշ հասի, հեյ... գրեթե միաբերան գորդա ցրինք մենք ու վազեցինք դեպի ձորը: Եդ մեռած Տիկոն վոնց շան նման հաջում: Իրա հաջոցից մեկ էլ տեսնենք յերկու գել, մե կը մեր Չամբարիցն էլ փոքր, մազը թափած մի թուլի չափ, մյու սը մեր Բողարից մեծ՝ ահագին բերանները բաց՝ դուրս թռան ձո րից ու մեզ տեսնելով ճղեցին դեպի Արփավարի ծմակը:

Մի քանի քայլ յեվս և տխուր տեսարանը բացվեց մեր առաջ... Մեր թուլի դոշն ընկած և քարի տակ, դմակն ու փորը չկա, իսկ անասունները չորս կողմը կտրած՝ արյունից հոտոտում են ու գոռ ցոռում:

Լացս յեկավ. բերանիս թիքեն կտրել ու «Թխլիկիս» կերակրել մեծացրել էյի:

— Համա գորբա շուն ես, Տիկո, ետը մեր Ալաշին էլ անցկա ցար թե չե եդ անիրավները տավարին կոտորելու էյին, — կատակեց Հովսեփը:

Արցունքի միջից ծիծաղեցի: Դեռ լավ եր, վոր մնասը քիչ եր առածը ասում և «Տերը տարածին և փոշման, գայլը՝ մնացածին» Սրանով էլ մխիթարվեցինք ու տավար վոչխարը հավաքելով, սիրտ ներս կտրած քշեցինք գոմերը:

Հեռվում շարաքաստիկ ծառն էր վառվում մի հսկայական

ջահի նման, իսկ գայլերը Ագոավի քարի մոտ վոռնում էյին: Յերեկի շատ էյին դժգոհ, վոր «վորսը» գլխներին հարամեցինք:

ՎՈՐՍՎԱՆ ԳՐՎԵՑԻՆՔ

— Չե տղերք, առանց հրացանի յոլա գնալ չի լինի, եդ ան տերները մեզ քանդեցին. են որն էլ Ղուկասանց Արշակիցը վեց վոչխար կոտորեցին, — ասաց Գրիգորը, — Թխլիկիս «մահվան» հա ջորդ որը:

— Բա ինչ անենք, մեզ հրացան չեն տա:
— Տղերք՝ յես ձեզ մի բան ասեմ. են որը մեր Ռուբենը ասում եր, թե գեղում վորսկանների միություն և կազմվել յեկեք գրվենք ու հրացան ստանանք:

— Գրվենք, գրվենք...
«Չորանների խորհուրդը» վորսից ինձ դելեգատ ուղարկել ղյուղ: Եդ յերեկոյան մտա գյուղ, մեր տան կողքով անց կացա հա սա գրասենյակին ու ահագին կուպայն ուսիս մտա ներս:

— Ո՛ր բարով, բարով չորան ախպեր տղերք, այ ձեզ պատկո մացու՝ գրեցեք գնա, լավ տղա յա դարձավ ընկերներին կոմսոմոլի քարտուղար Պետրոսը: Յերը նոր գյուղ բերած էլեքտրական լամպի լույսին հաղթեցի, աչքերս վեր քաշեմ տեսնեմ մի կտրձ շալվարով տղա, վոտներն ու ձեռները մինչև կեսը բաց՝ խուզարկու աչքերով զննում և ինձ:

Շփոթվեցի, «անպայման պատկոմների մեծավորն և, քաղաքից և յեկել», անցավ մտքովս. Եդ անիրավ Միկիչն էլ են կողմից թե՛

— Չեռ քաշեք, չոքանից ինչ պատկոմ, — վոր չասաց՝ քափ-քըր տինքն ինձ կոխեց:

— Խի, աչքաբաց տղա յա, գրեցեք. պնդեց Պետրոսը,
— Գրեցին ու մի կարմիր փողկապ էլ կպցրին վզիցս:

Իսկական «պատկոմ» կնքվեցի, բայց դե եդ փողկապը հեշ չեր սազում ահագին մոթալ փափախիս, մեծագլուխ կուպայիս ու կար կատած շալե շորերիս հետ:

Այդ յերեկո կոմսոմոլի քարտուղարի ու հորս հետ գնացինք վորսորդական ընկերության նախագահ՝ վորսկան Ակոփի մոտ:

— Այ բալամներ ախր թվանքը ձեր ինչ բանն ա, վորս անելը ձեր ինչ հոռնարն ա: Ու Ակոփ բիձեն ժպտալով պատմում եր արջի մա սին. վորն ըսկի հրացանին մտիկ չի անում, շատ վախտ յերկաթե

կոներ պետք է ունենաս ու ջութուկ ջան, վոր տեղն յեկած վախտը հետը կոխ բռնես:

Բայց դե մենք պոկ յեկող պտուղ չեյինք:

Պետրոսը բացատրեց, վոր գայլերը ել վոչխար չեն թողել, համ ել հրաման կա, վոր պիոններնրին գենքի վարժեցնենք, վոր ապա-
պայում իզիթ տղերք դուրս գան:

Պետրոսի քաղաքական ճառն ու յերաշխավորությունը անդա-
մազրեց մեզ ընկերությանն ու 3 հրացան պոկեց մեզ համար: Մի
քսան հատ ել փամփուշտ առանք:

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՎՈՐՍԸ

Եղ գիշեր քունս չտարավ: Հենց աքլորն առաջին բերան կան-
չեց, յես վեր թռա տեղիցս, սառը ջուրը յերեսովս տվի, տրեխներին
մեջ բուրդ դրի, հագա և մի շախաթվա պաշարով ու հրացաններով
բեռնավորված դուրս յեկա տանից: Մայրս շատ սղաչեց, վոր մնամ
լուսանա՝ չլսեցի, Հրացանը 25 տարեկան մարդու սիրտ եր տվել ինձ:


Հուսադեմին գիտեմ, վոր նապաստակները ճանապարհների վրա
յեն լինում: Գոմերին դեռ չեյի հասել, յերբ տեսնեմ ճանապարհի
քյանարում մի քան պլշած ինձ և նայում: Իսկ և իսկ նապաստակ
եղ անտերն ինձ վոր տեսավ յերեսը շուռ տվեց: Այ քեզ հիմար
կենդանի. քիչ մնաց փոթկամ: Հիմարը յերեսն ուրիշ կողմն և ա-
նում, վոր իրան չտեսնեմ, վոնց վոր կաքավը վորսորդ տեսնելիս
գլուխը տնկում և ձյունի մեջ: Դե, վորսկան տղա, հուշարդ տես-
նեմ. հրացանը լցրած, պատրաստ եր, չոքեցի ու տրամբ... դա մի
արշին ծուլ ելավ ու փովեց ձյունի վրա: Անպատմելի մի ուրա-
խություն պատեց ինձ: Վորսս վերցրի ու յերգելով, լեռը դղրդացնե-
լով, քոլերը դղրդացնելով, հաղթական կերպով մտա գոմերը:

Տղերքը շների հետ միասին գոռում-գոչումով դիմավորեցին ինձ

— Ադա, տո մի վորսկանիս տես և. զարմացած ու հիացած
տնտղում եյին նապաստակը: Յերբ նրանց պատմեցի նապաստակի
«հնարագիտության» մասին տղերքը քահ-քահ խնդացին, իսկ ու-
ղաղում*), Մելքոն ապին պատմեց, վոր վորսերի մեջ ամենից հի-
մարը նապաստակն և:

Իսկայն մասրի թփից շամփուրներ շինեցինք, բուխարին թե-

*) Որաջող դոմերում, մեծ մասամբ գեանափոր խրճիթներ են:



ժացրինք, վորսի խորոված կերանք ու մեկ-մեկ հրացան շալակած
տավարն ու վոչխարը հանդ տարանք:

— Դե հիմի թող գա, տես փորը վոնց եմ թափում:

— Թոքը ձախ կողքովն եմ հանելու:

— Մեռած բան ա, վոր մեկն ու մեկին չսպանենք:

Ու այսպես վատան-վատան, գլուխներս գոգելով հանդ գնացինք հենց այդ որր գայլերին կոտորելու հույսով:

Բայց մեր հաշիվն սխալ դուրս յեկավ, գայլերն ինչպես յերև վում է, գլխի եյին ընկել, վոր վտանգ է սպառնում իրենց. նրանք ել են ճանաչում, նույնիսկ շատ հեռվից, թե ձեռքինդ հրացան է, թե փայտ:

* *

Ի՞՞մ հորդորանքներով բոլոր ջահել չորանները, թվով չորս հոգի, գրվեցին պիոներական կազմակերպության մեջ:

Այնուհետև ամեն շաբաթ յերեկոները, հրացանները ձեռներին՝ պուղ եյինք զնում ու մասնակցում պիոներական կոլլեկտիվի հավաքույթներին:


ԿԻՏԱՐԸ ԲԱՌԱՉԵՑ ՈՒ ԸՆԿԱՎ

Անցավ 3, 4, 5, շաբաթ, գայլերը չկան ու չկան, որ չի անցնում, վոր կաքավ, նապաստակ չապանենք: Վայրի կատվին փախցնում ծառն եյինք հանում ու տակից զինվորական կարգով «գայլ» տալի:

«Հրամանատար» Գրիգորը հրահանգում եր—զվնդ...պլի, և յերեք հրացան միասին թնդում եյին: Կատուն կամ մոկուշը (սկյուռը) ողում պտույտներ նյին անում ու ճյուղից ճյուղ դիպչելով ընկնում ցած՝ ուղիղ շների բերանը, վորոնք հենց պատրաստ պրպզած «հափ» եյին անում և ողում բռնում ընկնող վորսին:

Նույնիսկ մի որ ել մի սիրուն կխտար (վայրի այծ) սպանեցինք: Ենթան լսվի եր ինեղճը բուրջ եր ուտում թփերից ու խլուռ-խլուռ անում: Մեկ ել խշխշոց լսեց տեղն ու տեղը պտավեց ու սկսեց հոտոտել: Տիկոն կրակեց, չդիպավ, բայց չփախավ: Տեղը մոյորված վոստովուտում եր, չգիտեր վորտեղից է գալիս գնդակը: Մեկ ել քարի տակից եղ անիրավ Գրիգորը վոր չտվեց... խեղճ կենդանին բուռաչեց ու ընկավ... Իրա մասին կարճ եմ անցնում... քանի հիշում եմ նրա ժղկոտցը խիղճս տանջում է...

Բայց դե մեր նպատակը գայլերին խփելն եր, նրանք ել մեռնակ պիշկաններն եյին վոռնում, կամ գոմերի մոտերքում մինչև լույսը շների հետ քուղլ անում:



ԳԱՅԼԵՐԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Մի յերեկո վոչխարը սունն եյինք բերում, մեկ ել ել անաեղար, փոքր գայլը յերեկոց վոչխարի ստաջին ու պտույտ գալով իրեն զցեց ճամբի թփերի մեջ: Վոչխարները խրանեցին ու դուրս յեկան ճամբից, իսկ մենք մարդով, հրացանով, շներով թափեցինք թփերը: Մեկ ել տեսնեք վերևում մեր Բողարն փոնց է հաջում

ու կոնձկոնձու՞մ: Յեա նայեմ, տեսնեմ՝ մի ահագին գայլ բռնել է
փոշխարի դմակից, իսկ շունը թռել է գայլի քամակն ու գգում է:
— Հայ, հարայ... Հայթար... Բողար... հրացանները թնդացին ձո-
րում, գայլը փոշխարին ու շանը թողեց ու փախավ:

Յերբ այս դեպքը պատմեցինք Մելքոն ամին, նա քմծիծաղ տվեց
չիբուխը վառեց ու ծխելով՝ սկսեց յեկար բարակ պատմել գայլերի
խորամանկության մասին:

— Են լղար պուճուրը, վոր կա՞ դանջղն ա (եգը) են մեծն ել՝
վորձը: Չորանին խափելու համար մեկը սուրուի (հոտի) առաջին
յերևում ա, վոր նրա յետևից վագեք, իսկ վորձը, շունքի նա ենքան
գոռով ա, վոր մի դոշ ել կթոցնի, սուրըվի յետևիցն ենպես ա փախ-
ցնում, վոր սկի դուք ել չիմանար: Համա Բողարը գորբա շուն ա,
նա ձեզանից խելոք ա ելել, ուստա շուն ա, ձեզ պես ջանել չի,
վոր սուրուն թողա, խափար ափոյ դելի յետևիցը գնա: Իսկ Բողարն
ոջախի առաջ պարկած՝ իմաստուն աչքերով նայում եր Մելքոն
ապնին ու պոչը մտերմաբար շարժում, կարծես հասկանում եր,
վոր իրեն են գովում:

Եդ յերեկո Բողարին սովորականից շատ լակ տվինք:

ՄԻ ՆՈՐ ՓՈՐՁԱՆՔ—ԳԱՅԼԸ ՀՈՏԻ ՄԵՋ

Բայց դե դրանով չպրծանք գայլերի թախարդից:

Մի որ շատ ձյուն յեկավ: Մառախուղն այնպես եր գետնին
չոգել, վոր մատոց մարդու աչք կոխեյիր, չեր տեսնի: Չյունն ել
անդադար գալիս եր: Տավարն առաջից, փոշխարը յետևից՝ հանդից
ճամբա ընկանք դեպի գոմերը: Եդ որն ել թարսի պես ջները հեա-
ներս չեյին: Ալխանանց Արշակի կովը քարափից վեր եր ընկել, շը-
ները ամբողջ որը լեշի վրայից չեկան փոշխարի մոտ:

Գոմերին մոտացել էյինք, յերբ հագիվ նկատեցի, վոր ճամբի
կողքից մի սև փոքր բան միացավ հոտին: Միքանի փոշխարներ թե-
թե խրանեցին ու նորից հանդարտվեցին:

Միրտս ահ ընկավ: Ասի՝ տղերք, յես լսել եմ, վոր եդ գելը
իրան շուն ա ձեացնում, խառնվում հոտին ու գիշերը գոմում կփ-
տորում փոշխարներին: Ընկերներս վրաս ծիծաղեցին:

— Այ սարսաղ, գելը վոր սուրըվի մեջ մանի, եսպես հան-
դարտ կգնան, ասաց Վահանը:

— Ախր են որվա գելին տեսար, վոնց վոր մի պուճուր թագի,
փոշխարները հենց կարծում են թե շուն է, նա հենց ֆանդով է
բարեկամանում, վոր չեն խրանում: Ու գայլի այդ խորամանկու-
թյան մասին պատմեցի բոլորն, ինչ վոր լսել էյի փորձված վորս-
կաններից:

Առաջ գնացինք մի թեթև փոշխարներին նայեցինք, վոչինչ
չկա:

Տղերքը սկսեցին ինձ ձեռք առնել:

— Խեղճ յերեխա, վախեցել է, աչքին բան է յերևում:

— Գյադեն քաջքերի փայ կղառնա:

— Տղեն փորձված վորսկան է, հո մասխարա չի:

Ինձ ու ինձ ենքան էյի շարացել, վոր մտքումս ասում էյի՝
«Երնակ մի կոտորի, վոր խելքներդ գլուխներդ գա»:

28 ՉՈՂ


Քեչեն (Թաղիք) փռեցինք բուխարիկի առաջ պառկեցինք: Կար-
պետը գլխներիս քաշեցինք: Համա ահը սրտումս է, չգիտեմ ինչու
մի տխուր զգացմունք պատել է սիրտս: մին ասի՝ ճրագը վառեմ,
գնամ գոմը տեսնեմ, մեկ ել վախեցա՝ տղերքը նորից ծաղրեն:

Քսեցինք:

Գիշերվա մի վախտը թմփթմփոց եմ լսում: Քնկոլով վեր կա-
ցա, աչքերս տրորեցի, տեսնեմ՝ գոմի կողմից ձայներ են գալիս,
փոշխարները պատեպատ են դիպչում, դմակները ծափ տալով դես
դեն փախչում:

— Այ տնաքանդներ, վեր կացեք, գիլանը փոշխարը կոտորե-
ցին, — բղավեցի յես, ճրագը վառեցի ու դուրս թաա: Գոմի դուռը
հենց բացեցի, մի սև բան թռավ ահագին ուժով, վոր տվեց դուրս
փախչի, կպավ դռան յեզրին: Դուռը փակվեց — ճրագը հանգավ, յես
մնացի ներսը: Տեսնեմ՝ գոմի առաստաղից հող է թափվում, մի
փոքր ծակ է յերևում, իսկ գելը թռչում է, վոր եդ ծակովը դուրս
գա: Դու մի ասի՝ դրա ընկերը կտուրը քանդում է, վոր ծակ բա-
ցի ընկերոջն ել, սպանած փոշխարներին ել դուրս հանի:

Մթնում կոպարս պտտում եմ ու դչրդ տալի, գոռոգոռում: Եդ
ժամանակ տղերքը ներս մտան ածխալիթները ձեռներին: Գոմը



լուսավորվեց: Եսերը գոմի կտրում վորձ գայլին են քլուում, իսկ ներսում եզը պատեպատ և գիպչում, թուշում վերև, — վոչխարներին հետը պատեպատ տալիս: Չոմբախները ուսներին՝ վրա հասանք

եղ գելի գլխին տուը թե կտաս՝ մեկ, հինգ, գելը շմեց, վեր ընկավ: Վոսկորները շարդեցինք ու պոչից քաշ տալով՝ դուրս գրցեցինք:

Բայց դե ինչ արած, վոր վոչխարի կեսը փրթել էր: Ներս մտանք հաշվեցինք. 28 հատ սպանված էր: Վոչխարի մեծ մասի բուկները ծակել էր ու պատն ի վեր ցից կանգնեցրել՝ ճիշտ Մելքոն ապի պատմածի պես: Եատերին վոչխարները իրենք էյին վոտի տակ տվել, սպանել: Իսկ մնացածների մի մասն էլ վիրավոր էր դմակից, բկից, վոտքից: Սաղ մնացածներն էլ քրտնքի մեջ մտած հեվում էյին:

Խեղճ կենդանիներ...

«ՎՈՉ ՍԻ ԳԱՅԼ ՍԵՐ ՀԱՆԳԵՐՈՒՄ»

Մյուս ոըը Տիկոյի խազեյինը փրփրած յեկավ և ուզեց վոտի տակ տալ, տրորել Տիկոյին: Ամբողջ «չոբանների խորհրդով» մի մարդու պես կանգնեցինք մեր ընկերոջ թիկունքում ու պաշտպանեցինք:

— Ել են հին վախտը չի, հա, խելքդ գլուխդ թոփ արա, ինչ ա՝ փորձանքը հո Տիկոն չի բերել:

Տիկոյի աղեն «յես ձեզ պատկում գրողի են... են...» մի լավ հայեոյեց ու սպանված վոչխարները սելը լցրեց գնաց:

Հիմի մտածում ենք, բա էլ ինչ ուզմականացում, էլ ինչ պիտներ, վոր եսքան թուք ու մուր գա մեզ վրա:

— Ձե, աղերք, ես էլ մի նամուս չի:

Յեվ վրեժը, կատաղությունը բորբոքվում, լափում էր մեզ: Վորոշեցինք՝ ինչ էլ վոր լինի, են յերկու գայլերին էլ սպանել: (Մելքոն ապին ասել էր, վոր մեր կողմերն են տարի եղ յերեք գայլերն են միայն՝ նա գիտեր թե վորտեղ ինչքան գայլ կա):

— «Վոչ մի գայլ մեր հանդերում» — ահա մեր պիտներական, վորտորական լոգունգը հանդիսավոր հայտարարեց մեր գոմերի «ողակավար» Տիկոն, ու վորոշեցինք գայլերի դեմ գործի դնել նաև թալակն ու դեղը:

Մյուս ոըը ընկերությունից բերինք մի թակարդ ու մի քիչ

եւ թույն: Թույնը շաղ տվինք մի քարափի ծակի առաջ, կարծե-
լով, վոր գայլի բուն է, իսկ թակարդը դրինք յերկու քարափի մեջ-
տեղ ընկած այն նեղ շավղի վրա, վորտեղից ամեն գիշեր գայլերը
գալիս եյին գոմերը, և քիչ հեռու ձայն ձայնի տալիս ու աղիողորմ
վռնում:

«ԱՆՄԵՆ» ԶՈՂԸ

Յերկու որ անցավ: Դեռ վոչինչ չկա: Թակարդի միջի մսի
կտորը սառել, քարացել էր ցրտից: Եղ թակարդ ասածս մի յեր-
կաթե ահագին պոչ ունի, վորը թաղում ենք գետնի մեջ, վորպես-
զի գայլը թակարդ ընկնելու դեպքում անշարժ մնա տեղը: Թակար-
դը սուր ճանկերով բռնում է գայլի թաթից, այն ժամանակ, յերբ
նա թաթը մեկնում է միսը վերցնելու: Այնուհետև նա մնում է
վոտքից բռնած:

Բայց արի տես, վոր մեր բախտից գայլերը նորից անհետա-
ցել են:

Մի առավոտ ել, յերբ «գայլի բնին» մոտեցանք, տեսնեմ կաղ-
նի ծառի յետևից մի պոչ է յերևում:

— Տղերք, գելը դեղ ա կերել, սատկել, գոչեցի յես ու վա-
զեցի առաջ: Ահագին մի թավամազ պոչ վեր քաշեցի, տեսնեմ՝ աղ-
վես է:

— Տո խնամի աղվես, բարո՞վ-բարո՞վ. հը՝ Մելքոն ապու մի-
նուճար հավը վոնց անուշ արիր: Խեղճ աղքատ, ո՞վ գիտի, դեռ չի
մարսել:

— Խեղճին կիսամուրագ արինք, ես վիրուճի (վայրենի) տե-
ղում անջաղ եր մի հավ ճարել, են ել գլխին հարամեցինք:

Աղվեսին քաշ տվինք գոմերը, վորթին տիկ հանեցինք ու կախ
տվինք գայլի, նապաստակների ու կիստարի մորթիների մոտ:

ՄԵՐ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Մեր ոլաջաղը կատարյալ մի թանգարան էր դարձել. նույն-
իսկ կաքավների ու մոշահավերի փետուրներն եյինք տիկ հանում,
մեջը խոտ լցնում ու դնում հավի թառի վրա: Կարծես կենդանի
թառած Թռչուններ լինեյին՝ գուլնգուլն կարմիր կատարներով:



Ս.Ա.

Ուրախանում, գվարճանում եյինք մեր թանգարանով, բայց
վոր հիշում եյինք վոչխարները խեղդած, շարված՝ քթածակներիցս
ծուխ եր դուրս գալիս: Սրտներիցս մոմուռը չեր գնում:

— Վրեժ գայլերից, վրեժ:

* * *

Շաբաթ յերեկոյան խմբով գնացինք գյուղ՝ պիոներական հավաքույթի: Մեր «Վոչ մի գայլ մեր հանդերուս» լողունգը պաշտոնապես հաստատվեց հավաքույթում: Թեև շատերը մեզ ձեռ ելին առնում, թե վոչինչ անող չեք, բայց կոպալով գայլ սպանելու և մորթիների թանգարանի մասին բոլորն ել լսել ելին ու տեղն ընկած ժամանակ գյուղամիջում պարծենում ելին չորան պատկոմների սխրագործություններով:

ԹԱԿԱՐԴԻ ՄԵՁ

Եղ գիշեր՝ հավաքույթից հետո՝ ել չքնեցինք, ճամպա ընկանք դեպի գոմերը: Պարզկա յեր ու ցուրա: Ձյունը դրուփ-դրուփում եր մեր վոտների տակ: Լազաթ ե տալիս, յերբ մարդ գիշերը՝ յերգում ե անտառում, այն ել խմբով: Եղ լազաթը մենք միշտ ել վայելում ելինք: Եղ գիշեր ել մինչև գոմերը դրդացրինք սար ու ձոր:

Լուսաբացին հասանք գոմերի մոտի բլրին:

- Տղերք, յեկեք գնանք թալակը տենանք,— առաջարկեցի յես:
- Բալամ, թալակից ձեռք քաշի, նա գել բռնողը չի,— ասաց Հովսեփը:

— Ով գիտի խարաբ— փչացած ե, ես յերկու շաբաթ ե՝ չի բռնում:

— Եսա մարտն ենք մտել, շուտով կը գարունքանա, մենք կիսամուրազ մնացինք, գելերը կծնեն՝ ութը— տասը կդառնան:

— Այշի, ձեռք քաշի, ով գիտի վախենաս ու չգնաս հենց եսպես ես ասում: Թասիբի ընկա ու ճանապարհից դուրս գալով՝ մըտա ծմակը:

Ձյունը ծնկներին ե հասնում: Քայլում եմ առանց հոգնելու. ձյունի մեջ թաղված չոր ճախ ու ձուխտը ճրութ-ճրութալով փշրվում ե վոտներիս տակ: Մոտեցա այն ժառերին, վորտեղից անցնող շափղի վրա, քարի մոտ թակարդն ենք դրել: Տեսնեմ ծառերի վրա շարթերը (մի տեսակ թռչուններ) ճյուղից ճյուղ են անցնում ու «չոթ-չոթ» ձայներ հանում: Խեղճ թռչուններն անհանգիստ են, սա նշան ե, վոր կենդանի կա: Բայց չգիտեմ՝ հիմի ի՞նչ են գազան համարում, թե մի ուրիշը կա: Առաջ գնացի, հասա քարավին, վորի

ԵՂ ԳԻՇԵՐ (ՍԵՏՏ) 65-50012



ստորստով անցնում է լեռնային շավիրը: Ահա քարը, սակայն թա-
կարդը չկա: Այ քեզ ոչին: Իջա ներքև, տեսնեմ՝ թակարդը հանված
է. ինչ վոր հետքեր կան, կարծես մի բան գլորվել է կամ քարը յե-
կել: Հետքերով առաջ գնացի, կարծես մի գերան քաշ յեն տվել
խիտ ծառերի ու թփերի արանքով: Հասա մի քարի և բարձրացա
վրան: Մեկ էլ քարի տակից ինչ վոր շան ծմրոց եմ լսում, նայում
եմ՝ մի ահագին սև պոչ է շարժվում: Իջա ներքև, հենց առաջին
հայացքից տեսածս մի ահագին բաց բերան եր և մի գույգ կատաղի
աչքեր: Իսկ և իսկ գայլ: Ինձ տեսնելուն պես նա իրեն գցեց զեպի
ձորը, իսկ առաջի աջ վտարից քարը եր գալիս յերկաթե թակարդը:
Ուրախութան ճիչեր արձակեցի ու հարձակվեցի գայլի վրա: Թա-
կարդի կեռը բռնեց մի թփից և գայլը կանգ առավ, ցավից վագրս-
տաց, լիզեց վիրավոր թաթն ու ցատկեց եմ կողմը, բայց իզո՛ւր,
թակարդը պինդ եր բռնել թփից: Միրտ արի, մոտեցա և չոմբախս
մեկնեցի գայլին:

— Հը, վոնց եր թուխ զոչի միսը, եսա քեզ տիկ կհանեմ, մի
սպասիր: Յես իմ յերեխայական շուլուխն եյի առաջ տանում, մեկ
եղ անիրավը կատաղած բռնեց չոմբախիս ծայրից, թափ տվեց ու
զինաթափ արավ ինձ:

Ատամներն այնպես է չխկչխկացնում ու աչքերից կայծեր ար-
ձակում, վոր մագերս փշաքաղվում են: Չյունի տակից քար, փայտ
հանեցի ու շարտեցի վրեն: Ավելի կատաղեց:

«Ես անտերը մի ոչին չհանի գլխիս», — մտածեցի յես, յես
քաշվեցի ու կատվի ճարպկությամբ մագլցելով հասա մի վիթխա-
րի կաղնի ծառի կատարին: Գոմերը հեռու յեն, դիմացի սարի լան-
ջին յերևաց մեր տավարը: Ինչքան ուժ ունեյի՝ գոռացի:

Հեյ, Տիկո... Վահան, հեյ...

Չայնս արձագանգեց ձորում ու կրկնապատկված ուժով հա-
սավ հեռավոր ծմակները:

— Հեյ, լավեց պատասխանը.

— Ադա՛, գելը բռնել եմ... թոկ բերեք, թո՛կ...

Ուրախութան մի զայմաղալ ընկավ տղերքի մեջ, Տեսնեմ՝ դի-
մացի սարի լանջով յերկու հոգի հարայ-հրոցով վազում են զեպի
գոմերը: Իջա ծառից: Գայլն իրան ուտում է կատաղությունից, իսկ

յես քարի տակ ծուլ-ծուլ եմ լինում, լեզուս ու ատամներս ցույց
տալիս գայլին, թքում ու «Չղայնացնում»:

Քիչ անց, ձորում լավեց շների հաջոցը, նրանց հետ ել տղեր-
քի դշրդը: Չյունը ճղելով՝ անտառի գավակները բարձրանում են
վեր: Ծները հասան ու ահագին աղմուկով հարձակվեցին գայլի վրա:

Եղ անտերը սուղջ թաթով դես դեն եր շարտում շներին, վո-
րին ել ահագին բերանով բռնում ու տակն եր կոխում: Ծները կա-
տաղեցին ու ես եր, քիչ եր մնում գայլի բուրդը բամուռն տան՝
չթողինք:

— Տղերք, սաղ-սաղ պետք է գյուղ տանենք, — հրահանգեց
Տիկոն:

— Սաղ, սաղ... ձայն տվինք մենք:

Տիկոն ճարպիկ քյամանո գցող եր, սարերում ամառը քանի-քա-
նի անգամ վայրենացած, կատաղած ձիանքին շրջապատել էյինք,
Տիկոն ահագին պարանը շարտել եր, ողակել ձիու վիզն ու թուել
մեջքին:

Յեվ Տիկոն այս անգամ ել պատրաստեց ողակը:

Տղերք, գուք յես քաշվեցեք, — հրահանգեց նա: Թոկը թռավ
ողում և մի ակնթարթում ողակը գրկեց գայլի վիզն ու սկսեց սեղ-
մել: Գայլն ազո՞ղ թաթով սկսեց քաշքշել պարանը, ատամներով
ծվատել, բայց իզուր ջանքեր: Չորս հոգով կախվել էյինք պարա-
նից ու քարը էյինք տալիս զեպի գոմերը: Գայլը սղողում եր սա-
ռած ձյունի յերեսով, իսկ մենք ուղղակի ուրախությունից այնքան
գոռացինք, վոր ամբողջ՝ գոմերի տավարածները ես ու են սարի
լանջից թափվեցին մեզ մոտ, լծվեցին քաշանին և մասնակից յե-
զան մեր ուրախությանը:

Այ քո մեները կոտրի, հենց ես եր, այ, վոր մի շաբաթ
առաջ մեր Մարալի բուկը ծակեց. ես ատամով ծակեցիք, — ասաց
տավարած Սերոբն ու չոմբախի ծայրը կոխեց գայլի բերանը:

Իե, դե՛, մեր քեռու քեֆին մի դիպչի, սաղ-սալամաթ գե-
ղն ենք տանելու, հրահանգեց ողակավար Տիկոն:

Գոմերում իսկույն մի բուն շինեցինք, գայլը համարյա անշուն-
չացեղ եր, վտարից ազատեցինք թակարդը, առողջ վտարը շղթայով
կապեցինք այնուհին ու իրեն թիախով հրեցինք, գցեցինք բունը

Ին հիմի գնա, աղավառի ապրի ու յերագումդ թուխ գոչ
կեր:

ՎԵՐՁԻՆ «ԳՐՈՂ»

Գարունը բացվում էր, արդեն մարտի վերջն էր, իսկ մեծ
գայլը շարունակում էր սնապատիժ կերպով եստեղ-ենտեղ վրասներ
տալ, վոչխար փախցնել:



Հանդերում ձյուն չկար հետքը չեր յերևում: Գայլին սպանե-
լու հույս չունեցինք:

Չսնձաղիկի ու մանիշակի «խեչփունջերը» ձեռքներին՝ դռուղ
եյինք մտնում, գնում պիտներական պարապմունքներին: Կոլլեկտիֆն
ու նույնիսկ հասակավոր գյուղացիները թեև մեզ գովում էյին,
բայց մուրագներս կիսատ էր մնացել, մենք ենքան էլ գոհ չեյինք
մեզանից:

Ին մեր կողմերը լեռնոտ յերկիր է, թարս բնություն ունի:
Ապրիլի սկզբին խոր ձյուն յեկավ: Թեև տիրեցինք, վոր գարնան
մեջքը կոտրվեց, բայց ձեռաց ուրախացած՝ հրացաններին վաղե-
ցինք, յերբ մի առավոտ ձեզին Սերոբը խաբար բերեց, թե գելը
հենց նոր Ալխանանց քամի քամակիցը ծմակը մտավ:

Մելքոն ապին հին վորսկան էր: Նա մի ախ քաշեց, վոր էլ
ջահել չի, վոր ազանի պես վրա հասնի, և ապա մեզ սովորեցրեց,
թե վոր կողմով գնանք և ինչ սնենք:

Նրա կարգադրության համաձայն վոչխարը դուրս արինք: Վոչ-
խարն ի ցույց գայլի թողինք գիմացի մի քարափի գլխին, վոր ես
կողմ նայի, իսկ յես ու Տիկոն գաղտնի ճանապարհով կտրեցինք
սար, ձոր ու գուրս յեկանք գայլի թիկունքում՝ նրա յերևացած
տեղից բավական հեռու: Փրտենք, վոր գայլը վոչխարը շրջակայքից
չի հեռանա: Մելքոն ապին ասել էր, վոր գայլը ակռավի քարի տա-
կից կհետևի վոչխարին:

Գարնան արևը դուրս էր յեկել: Ձյունի հատիկները միլիոնա-
վոր գոհարների նման պսպղում, փայլվում ու աչք էյին ծակում:
Վրնց ենք սպանելու, աչքերին շուրը գնում է, — ասաց Տիկոն
շնշալով: Յեվ իսկապես, ձյունին նայել չեր լինում:

Կուզեկուզ, անձայն ու դեպի քայլերով մոտեցանք Ագռավի
քարին: Մի նապաստակ թփի տակից փախավ ու քիչ հեռվում պր-
պրզեց: Ո՞վ է կրակողը, բան չունես: Չե, առաջ գնանք, մեզ գայլն
է պետք: Հայացքներս հենց նապաստակից դարձավ դեպի քարափը,
տեսնենք քարափի տակին մի սև բան կանգ առավ ու յերեսը դե-
նը նայում է: Հրացանի փակը բացելու թեթև շխկոցից գայլը յես
նայելու համար տեղն ու տեղը պտավեց (վորսվհետև վիզը կարճ
էր, յես նայել չի կարող) և մեզ տեսնելով մինչ շուռ կգար փախ-

չելու, մեկը մյուսի յետեից թնդացին՝ առաջ Տիկոյի, ապա իմ հր-
րացանները: Գայլը յետևի վոտների վրա կանգնեց, մի տեսակ իշի
խռանչոցի նման ձայն հանեց, ազդեցորմ վոտնաց ու գլորվեց ներ-
քե... Այդ վոտնոցին մենք պատասխանեցինք հաղթական մի աղա-
ղակով: Հեռվից գեպի մեզ էյին վազում շները, և չորանները բարձ-
րաձայն հարայնրոցով...

ՀԱՂԹԱԿԱՆ ՄՈՒՏՔԸ

Ապրիլյան մի պայծառ առափոտ, նոր տերևակալած անտա-
միջով կտրեցինք ու հաղթական յերգերով մասնք պոչը: Սայլից
քարը եր գալիս անագին գայլը, իսկ մենք յուրաքանչյուր մորթի
մի-մի դրոշակներ էյինք շինել ու պարզած տախտակի վրա ածու-
խով գրել մեր մարտական փորսորդական յոգունքը: «Վոչ մի
գայլ մեռ հաճողերում»: Մեր ամբողջ ձմեռվա փորսորդական գոր-
ծունեյությունը՝ մեր թանգարանը՝ գայլերի, նապաստակների,
սկյուռների, կատունների, գույնգույն թռչունների ու կխտարի մոր-
թիները դրինք գրասենյակի առաջ՝ գյուղի կենտրոնում: Ամբողջ
գյուղը գլխներիս հավաքվեց: Շները մոտենում էյին գերի գագա-
նին ու նրա կատաղած հայացքին հանդիպելով՝ կոնձկոնձելով էտ
քաշվում: Յերեսանները քիչ եր մնում հետաքրքրությունից վ
թափվեն ու ցրիվ տան մեր թանգարանը:

Ապրեք, տղերք, ապրեք:

Այ, սրանք են իգիթը, թե չե՝ մեր փախան ամեն մի ավա-
գակի իգիթ էյին ասում:

Յեզ գյուղացիք զարմացած ու հիացած էյին փոքրիկ փորս-
կանների վրա:

— Հեյ գիգի ժամանակ, — հառաչեց փորսկան Մուկուչը — են
անտեր չախմախաժոր թվանքն եր, շատ ա պատահել, փոր արջի
ոնխն եմ կոխել ու չրթել չախմախաքարն անպետք ա ըլել, չի
տրաքել ու խանչալով, գանաչով մի հնարքով շանչերիցը պրծել
եմ: Դե հիմի ի՞նչ կա, մտին թվանքը ձեռներին, իրանք ել
արջի հետ քոլում մեծացած տղերք. դե կսպանեն ու կսպանեն:

— Շարվիր, լավեց կոլվարի հրահանգը: Այդ որը տոն եր, քա-
ղաք էյինք գնալու: Շարվեցինք, գայլի մորթիները դրոշակներ շի-

ցինք ու վողջ կոլլեկտիվով ճամպա ընկանք դեպի քաղաք:

Յերևի առաջուց իմաց էյին տվել: Քաղաքի պիտներական կազ-
մակերպությունը դիմավորեց մեր հաղթական մուտքը որկեստրով:

Շքեղ դահլիճի բեմը զարդարվեց մեր թանգարանով, իսկ մենք
խառավոր կերպով, թեև չորանավարի շոմբաղները ուսներին՝ բազ-
մեցինք բեմի փափուկ աթոռների վրա: Դու մի ասիլ՝ հենց այդ որը
կոմսոմոլի զատիկն է: Դանլիճը լիքն է պիտներներով, կոմյերիտա-
կաններով:

Վառերում մեզ ել հիշեցին, ռազմականացումն ել, Չեմբերլենին
եյ... ամաչելուց քրտնքումը կորել էյի. ո՞վ է մանրամասը հիշում:
Մենակ են եմ հիշում, վոր չեկայի նախագահ ընկ. Բագրատը մո-
տեցրեց մեզ յերեք կարաբինկա (կարճ հրացան), թեթև խփեց ուս-
ներին ու ասաց.

— Դոչա՞ղ տղերք, մեր սահմաններից ել հենց եղ սրտով կըջեք
բուրժուա գայլերին:

Հրացանները պատրաստեցինք, զգաստ կանգնեցինք ու միա-
ձայն փորոտացինք.

— Միշտ պատրաստ ենք. «Վոչ մի գայլ մեռ կարմիր սահ-
մաններում»:

Պահլիճում թնդացին ուռաները, և դրոշակները իջան մեր պատ-
պահած հրացանների վրա...

Գյուղ գնալիս, յերբ տերտերները տնորհնեք էյին գնում, Տի-
կոն՝ թե տղերք, բա սրանց յերբ ենք տիկ հանելու:

— Թալակը պահի, պետք կգա, — պատասխանեցի կատակով:



(3) 565-1930թ.

ԳԻՆԸ՝ 50 ԿՈՂ.

ԳՄԿ

В. АНАНЯН

Ни одного волка на наших
ПОЛЯХ

Իրւյս և տեսնում Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. Սոցիալատգլխավարչու-
թյան կից գործող Մանկական Գրականության Հանձնաժո-
ղովի հավանությամբ:

6768.